Մանկական «Տիկնի պսակ» երաժշտածիսական ներկայացում

Սաներից երկուսը տիկնիկներով խաղում են, մեկի տիկնիկը տղա է, մյուսինն՝ աղջիկ: Նրանցից մեկը մյուսին հարցնում է.

- Քո տիկնիկի անունն ի՞նչ է:
- Սաթո, բա քոնի՞ անունն ինչ է:
- Հայկո:
- Կգա՞ս տիկնի պսակ խաղանք:
- Կգամ, արի խաղանք:

Միասին երգում են.

Պսակ-պսակ, տիկնի պսակ.
Էկեք խաղանք տիկնի պսակ,
Տիրնանինե, տիրնանինե,
Զուռնի ձենը գեղով մին է...

Մասնակիցները բաժանվում են երեք խմբի՝ նվագածուներ, հարսնացուի կողմի խնամիներ, տղայի կողմի խնամիներ:

Հարսի տիկնիկով երեխան.

- Կլորիկ ու թմբլիկ եմ,

Պստլիկ ու ճստլիկ եմ,
Քիթս պուճուր – պուճուրիկ է,
Աչուկներս սևուլիկ են,
Կա՞ ինձ նման սիրունիկը:

Բոլորը միասին՝
- Չկա՛, չկա՛, չկա՛:

Հարսի մայրը.

- Աղջիկ ունիմ օղերով,

Հարս պիտ անիմ քողերով,
Աղջիկ ունիմ հարսնացու,
Կտրիճ կուզիմ փեսացու:
Ո՞րին տամ, ո՞րին չտամ:

Փեսայի կողմի խնամիները.

- Մեր տղային տուր:

Հարսի մայրը.

- Տա՞մ, թե՞ չտամ:

Փեսայի կողմի խնամիները.

- Տու՛ր, տու՛ր, լավ տղա է:

Կողքից մեկն ասում է.

- Սպասե՛ք, բա չիմանա՞նք՝ հարսն ում է ուզում:

Հարսի մայրը.

- Լավ, ում որ կուզի, նրան կտամ:

Հարսիկի տիկնիկը ձեռքին աղջիկը գնում կանգնում է փեսայի տիկնիկը բռնած տղայի կողքին:

Բոլորը միասին. - Հարսը փեսին հալալ է:

Միասին երգում են «Պսակ, պսակ», «Այ ֆոռկա» երգերը

Պսակ-պսակ, տիկնի պսակ.
Փեսեն էկավ՝ լիքը քսակ –
Տիրնանինե, տիրնանինե,
Զուռնի ձենը գեղով մին է...

Բոյը՝ չինար, մեջքին՝ քամար,
Աչքերը՝ ծով, ունքը՝ կամար –
Տիրնանինե, տիրնանինե,
Զուռնի ձենը գեղով մին է...

Այ ֆոռկա
Այ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,
Էսօր մեր տուն հարսնիս կա,
Էսօր մեր տուն հարսնիս կա,
Կոլոտ փեսին բեղ չկա:

Այ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,
Էսօր մեր տուն հարսնիս կա,
Թավեն ծակ է, եղ չկա,
Փեսեն էկավ՝ տեղ չկա:

Այ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,
Էսօր մեր տուն հարսնիս կա:

- ✓ **Աղջիկները շրջապատում են աղջկա տիկնիկին (փնջատուն), մի կողմ են տանում ու գովում. Ձեր տուն մտնի հազար բարի,**

Հաճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը հորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք՝ լիքը տնով:

Աղջկե՛ք, պար բռնեցեք,
Սաթոյի աչեր գովեցեք:
Ա՜յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պես փայլուն աչեր:

Տղաների խումբը, որը շրջապատել է տղայի տիկնիկին, գովում է.

Ջա՜ն, տղե՛ք, պար բռնեցեք,
Հայկոյի կոներ գովեցեք:
Ա՜յ կոներ, ուժեղ կոներ,

Դուք կշարժեք մեծ-մեծ լեռներ:

Գալիս է տերտերը

Պսակ, պսակ, տիկնի պսակ, արջի քոլոլ, դեղին դմակ,
Կուժն ու կուլեն գլխիդ կոտրեմ, տեր ես, թե՝ չէ:

Փեսան
– Տե՛ր եմ:

Բոլորը միասին բացականչում են.
– Տե՛ր է՞:

Տերտերը

Պսակ, պսակ, տիկնի պսակ, արջի քոլոլ, դեղին դմակ,
Կուժն ու կուլեն գլխիդ կոտրեմ, հնազանդ ես, թե՝ չէ:

Հարսը
– Հնազանդ եմ:

Բոլորը միասին բացականչում են.
– Հնազանդ է՞:

Միասին երգում են «Ծառ ծաղկեցավ» երգը:

Սուրբ Կարապետա օրհնութենով, օրհնութենով
Ծառս ի ծաղկեցավ, ծառս ի ծաղկեցավ,
Ծառ ծաղկեցավ, ճյուղ բազմեցավ՝
Կանաչ ու կարմիր:

Բարեմաղթանքներ՝

- ✓ Կարասն ձեր լցվի գինով,

Եվ տունը ձեր՝ շեն բարիքով:

- ✓ Ձեր տուն մտնի հազար բարի,

Հաճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը հորեր շատ ունենաք, Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք՝ լիքը տնով: